

Հայաստանի Հանրապետություն  
Հայտերի ներկայացման հրավեր  
Ազգային մրցութային սակարկություն

Գյուղական կարողությունների ստեղծում ծրագիր, փոխառություն No 1390P

ՀՀ Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի և ՀՀ Սյունիքի մարզի Խնածախ համայնքի  
միջին ճնշման գազատարերի կառուցում RACP/CW/NCB-2014/001

Ամսաթիվ՝ 10 սեպտեմբերի 2014թ.

- 1 Սույն հրավերը հաջորդում է սույն ծրագրի համար հրապարակված Ծրագրի Գնումների ընդհանուր ծանուցմանը, որն զետեղվել է “Development Business” պարբերականի 2011թ. հունիսի 24-ին, UN331 թիվ 802 համարում:
- 2 Հայաստանի Հանրապետությունը Միջազգային զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամից (ՄԶՕՀ) ստացել է փոխառություն “Գյուղական կարողությունների ստեղծում” ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է փոխառության գումարների մի մասը օգտագործել ՀՀ Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի և ՀՀ Սյունիքի մարզի Խնածախ համայնքի միջին ճնշման գազատարերի կառուցում RACP/CW/NCB-2014/001 պայմանագրով նախատեսվող աշխատանքների դիմաց վճարումներ կատարելու համար:
- 3 ՀՀ կառավարության աշխատակազմի Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ-ն հրավիրում է իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող կազմակերպություններին ներկայացնելու հայտեր վերոնշյալ պայմանագրով նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման համար: Աշխատանքների իրականացման ժամկետն է՝ 5 ամիս:
- 4 Շահագրգիռ և իրավասու հայտատուները կարող են ստանալ լրացուցիչ տեղեկություններ և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ստորև նշված հասցեում բոլոր աշխատանքային օրերին, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 09:00-ից մինչև 18:00:
- 5 Հետաքրքրություն ունեցող հայտատուների կողմից մրցութային փաթեթը հայերեն լեզվով կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեում, գրավոր դիմում ներկայացնելու և 60,000.0 ՀՀ դրամի չափով, չփոխհատուցվող գումար վճարելու պարագայում: Նշված գումարի վճարման եղանակն է ստորև նշված բանկային հաշվին վճարումը:
- 6 Որակավորման չափանիշները ներառում են.  
ա/ Վերջին երեք տարիների ընթացքում կատարած շինարարական աշխատանքների միջին տարեկան ծավալը պետք է կազմի՝ 632,000,000.00 ՀՀ դրամ; բ/ որպես գլխավոր կապալառու պետք է ունենա փորձառություն նմանատիպ բնույթի, բարդության և արժեքի 2 շինարարական աշխատանքներում վերջին հինգ տարիների ընթացքում; գ/ շրջանառու ընթացիկ միջոցներ և/կամ վարկային գծերի հնարավորություններ, այլ պայմանագրային պարտավորություններով չճանրաբեռնված՝ 35, 100,000.00 ՀՀ դրամ չափով:
- 7 Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև 2014թ. հոկտեմբերի 08-ը ժամը 11:00: Էլեկտրոնային եղանակով հայտերի ներկայացում չի թույլատրվում: Ուշացված հայտերը կմերժվեն և կվերադարձվեն Հայտատուներին չբացված վիճակում: Հայտերը կբացվեն անմիջապես, 2014թ. Հոկտեմբերի 08-ին ժամը 11:00-ին մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ՝ ստորև նշված հասցեում:
- 8 Մրցույթը կիրականացվի Միջազգային զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամի Գնումների Ուղեցույցների համաձայն՝ Ազգային մրցութային սակարկության եղանակով: Մրցույթը բաց է Մրցութային փաստաթղթերով սահմանված իրավասու երկրների ծագում ունեցող բոլոր հայտատուների համար:
- 9 Հայտերը պետք է ուղեկցվեն Հայտի երաշխիքով, որի գումարը պետք է կազմի՝ 3,510,000.00 ՀՀ դրամ:  
Վերևում հիշատակվող հասցեն է.  
ՀՀ ԿԱ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ  
ՀՀ, ք. Երևան, 0010, Տիգրան Մեծի 4, 6-րդ հարկ, 14-րդ սենյակ, տնօրեն Աշոտ Վարդանյան  
հեռ. 37410- 54-65-10; Ֆաքս: 37410-54-65-10 /104/  
Էլ.փոստ:[procurement@rado.am](mailto:procurement@rado.am); Ամերիա Բանկ ՓԲԸ, հ/հ 15700 – 11483010200 /ՀՀ դրամով փոխանցումների համար/